Կամավոր ատեստավորում

Ուշադրություն! Այս տարի՝ 2022թ., կամավոր ատեստավորման կարող են դիմել միայն 5-12-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները/աշխատակիցները (սահմանված է կարգով):
Կամավոր ատեստավորման մասին նշումը կատարելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

1) ուսուցիչը պետք է իր մատյանում սեղմի «Ցանկանում եմ ատեստավորվել» սեղմակը (նկար 1),
2) բացված էջում անհրաժեշտ է սեղմել «Ընտրել առարկան» սեղմակը, որտեղ երևում են այն բոլոր առարկաները, որոնք ուսուցիչը դասավանդում է տվյալ դպրոցում 2021-2022 ուս.տարում և ընտրել այն առարկան, որից նախատեսում է քննություն հանձնել (նկար 2): Առարկաների ցանկում երևում են և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակում ուսուցչի/աշխատակցի կողմից դասավանդվող (դասավանդված) առարկաները:
3) Առարկան ընտրելուց հետո անհրաժեշտ է հաստատել գործողությունը (նկար 3): Ընտրված առարկան խմբագրելու/փոխելու համար անհրաժեշտ է ցանկից ընտրել և նշել այլ առարկա և հաստատել գործողությունը: Եթե ցանկանում եք ջնջել/հեռացնել նշումը, սեղմեք «x» նշանի վրա և հաստատեք գործողությունը (նկար 4):

Գործողությունը հաստատելուց հետո Ձեր նշումները կպահպանվեն:

Ուշադրություն՝ գործողությունը հաստատելիս հնարավոր է բացվի նման հաղորդագրություն. (նկար 5):

Այս խնդիրը կարգավորելու համար օպերատորը պետք է ԴԿՏ համակարգում՝ ուսուցչի անձնական էջում, ավելացնի ուսուցչի հեռախոսահամարը և «Անձը հաստատող փաստաթուղթ» ենթաբաժնում կցի անձնագրի կամ ID քարտի նկարը: Անհրաժեշտ է նաև, որ ուսուցիչը մատյանի անձնական էջում մուտքագրի էլեկտրոնային փոստի հասցեն (նկար 6):

<u>Ուշադրություն!</u> Եթե սեղմել եք «Ընտրել առարկան» սեղմակը և առարկաների ցանկ չի բացվում, նշանակում է որ դուք չեք դասավանդել 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակում, երկրորդ կիսամյակում նույնպես չեք դասավանդում և Ձեզ համար դասաբաշխում կատարված չէ:



<u>Նկար 1</u>

Նկար 2



Նկար 3



Նկար 4



Նկար 5

Նկար 6


ԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՏՅԱՆ
46763
Գլխավոր էջ
Ուսուցիչներ
Խմբագրման Պատմություն
Անձնական տվյալներ
Էլ. հասցե
Անուն
Լիանա
Ազգանուն
Անոյան
ՊԱՀՊԱՆԵԼ
ԼԻԱՆԱ ԱՍՈՅԱՆ
(ԿԱՐՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ)
Անձնական էջ
Դուրս գալ


ԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՏՅԱՆ
46763
Գլխավոր էջ
Ուսուցիչներ
Խմբագրման Պատմություն
Ցանկանում եմ Ատեստավորվել
Կամավոր ատեստավորում
Որ առարկայից եք քննություն հանձնելու
ՖԻԶԻԿԱ
Microsoft Office Ho...
matyan.emis.am
Facebook
192.168.6.59:5000 says
Գործողությունը կատարելու համար Ձեր անձնական գործում՝ ԴԿՏ համակարգում պետք է կցված լինի Ձեր անձը հաստատող փաստաթղթի պատճեն, հեռախոսահամարը և էլփոստը
OK